

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

### ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2016թ. մայիսի 25-ի նիստի

Խորհրդի 42 անդամներից ներկա էին 34-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ.Սուջյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

#### ՕՐԱԿԱՐԳ

1. Տարոն Պետրոսյանին «ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի բարեկամ» տիտղոսով պարգևատրում:
2. Գիտական հաղորդում (զեկ.՝ Սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, պրոֆ. Գ.Դանիելյան):
3. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Վ.Ավետիսյան):
4. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի միջնորդությունը՝ Սահմանադրական իրավունքի ամբիոնի դասախոս, ի.գ.թ. Ռուստամ Մախմուդյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին:
5. Հաղորդում իրավագիտության ֆակուլտետում ուսումնական և ուսումնասովորական գրականության պատրաստման վիճակի մասին:
6. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի առկա ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելության քննություններին մասնակցության երաշխավորում (զեկ.՝ խորհրդի գիտ. քարտուղար Տ.Սուջյան):
7. 2015-2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսանողական սոցիոլոգիական հարցումների արդյունքների ամփոփում:
8. Իրավագիտության ֆակուլտետի առկա ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:
9. Ընթացիկ հարցեր:

1. ԼՄԵՑԻՆ. Տարոն Պետրոսյանին «ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի բարեկամ» տիտղոսով պարգևատրում:

Խորհրդի նախագահ, դեկան Գ.Ղազինյանը Տարոն Պետրոսյանին պարգևատրեց ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի բարեկամ» տիտղոսով՝ շնորհակալական խոսքեր հայտնելով այն անգնահատելի աջակցության համար, որը վերջինս ցուցաբերել է ֆակուլտետի 80-ամյակին նվիրված ֆիլմի, ինչպես նաև ուսանողների մասնակցությամբ՝ Ղարաբաղյանի հիմնահարցին նվիրված Եվրոպական Պառլամենտի նիստի և Քրեական դատավարություն դասընթացի շրջանակներում կազմակերպված դատախազի ուսումնական ֆիլմերի պատրաստման հարցում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Գաբուզյանը, պրոֆ. Հ.Խաչիկյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը, ՌԻԳԸ նախագահ Լիլիթ Խաչատրյանը:

**2. ԼՍԵՑԻՆ. Գիտական հաղորդում (զեկ.՝ Սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, պրոֆ. Գ.Դանիելյան):**

Սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, պրոֆ. Գ.Դանիելյանը հանդես եկավ գիտական հաղորդմամբ՝ ընդհանուր գծերով ներկայացնելով ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Վ.Հովհաննիսյանը, պրոֆ. Ա.Գաբուզյանը, պրոֆ. Հ.Խաչիկյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաղորդումն ընդունել ի գիտություն (հաղորդումը կցվում է):

**3. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Վ.Ավետիսյան):**

Քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ, պրոֆ. Վ.Ավետիսյանը ամփոփ տեղեկություններ ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում (2015 թվականի հուլիսի 1-ից մինչև 2016 թվականի մայիսի 24-ը) իր ղեկավարած ամբիոնի ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Ս.Մեղրյանը, պրոֆ. Ն.Այվազյանը, պրոֆ. Տ.Բարսեղյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվետվությունը գնահատել դրական (հաշվետվությունը կցվում է):

**4. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի միջնորդությունը՝ Սահմանադրական իրավունքի ամբիոնի դասախոս, ի.գ.թ. Ռուստամ Մախմուդյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին:**

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, պրոֆ. Ս.Դիրանդյանը ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, հայտնեց, որ ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են դոցենտի գիտական կոչում շնորհելու համար ՀՀ կառավարության կողմից սահմանված պահանջներին, ինչպես նաև ներկայացրեց Սահմանադրական իրավունքի ամբիոնի միաձայն երաշխավորությունը և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի դրական եզրակացությունը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Ն.Այվազյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

Խորհուրդը որոշեց անցկացնել բաց քվեարկություն, որի արդյունքում միաձայն բավարարվեց մրցութային հանձնաժողովի միջնորդությունը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաստատել քվեարկության արդյունքները և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին Սահմանադրական իրավունքի ամբիոնի դասախոս, ի.գ.թ. Ռուստամ Մախմուդյանին շնորհել դոցենտի գիտական կոչում:

5. **ԼՄԵՑԻՆ.** Հաղորդում իրավագիտության ֆակուլտետում ուսումնական և ուսումնասօժանդակ գրականության պատրաստման վիճակի մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

Սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, պրոֆ. Գ.Դանիելյանը տեղեկացրեց, որ արդեն իսկ հրատարակվել են մունիցիպալ իրավունքի և սահամանդրական իրավունքի 1-ին մասի դասագրքերը, վարչական իրավունքի դասագիրքը խմբագրման փուլում է, իսկ օգոստոսի վերջին կամ սեպտեմբերի սկզբին ծրագրվում է տպագրության ուղարկել ֆինանսական իրավունքի և սահամանդրական իրավունքի 2-րդ մասի դասագրքերը: Խորհրդի նախագահ, պրոֆ. Գ.Ղազինյանը, ընդհանուր առմամբ դրական համարելով նման կարճ ժամանակահատվածում ուսումնական նյութի նորացումը: Այդուհանդերձ, կարևորելով դասագրքերում նաև անհրաժեշտ պրակտիկ նյութի զետեղումը՝ խորհրդի նախագահն առավել նախընտրելի համարեց նշված պահանջի բավարարումը թեկուզև փոքր ինչ ավելի երկար ժամկետներ նախատեսելու պայմաններում:

Քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ Վ.Ավետիսյանը տեղեկացրեց, որ մայիս ամսվա մեջ հրատարակվել է Գրիգոր Բեքմեզյանի՝ «Գույքի օտարման պայմանագրեր» վերտառությամբ ուսումնական ձեռնարկը, զրեթե պատրաստ վիճակում է քաղաքացիական իրավունքի խնդրագիրքը, իսկ 2017-2018թթ. ծրագրվում է վերահրատարակել քաղաքացիական իրավունքի 2-րդ և 3-րդ մասերի դասագրքերը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում կատարվելիք ծրագրվող փոփոխություններին և լրացումներին համապատասխան: Ամբիոնի վարիչը նաև հայտնեց, որ պրոֆ. Ա.Հայկյանցի նախաձեռնությամբ նախատեսվում է հրատարակել ընտանեկան իրավունքի նոր դասագիրք:

Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ պրոֆ. Ս.Դիլբանդյանը նշեց, որ ամբիոնում դասավանդվող հիմնական դասընթացների դասագրքերի մշակման աշխատանքները կապված են ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի ընդունման, ինչպես նաև ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու արդեն իսկ մեկնարկած գործընթացի հետ: Ամբիոնի վարիչը տեղեկացրեց, որ արդեն իսկ սկսվել են քրեական դատավարության նոր դասագրքի պատրաստման աշխատանքները, մասնավորապես, կազմվել է դասագրքի բովանդակությունը և կատարվել է թեմատիկ բաշխում ամբիոնի դասախոսների միջև:

Միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ, պրոֆ. Վ.Ստեփանյանը հայտնեց, որ ամբիոնում մեկնարկել են միջազգային իրավունքի դասագրքի մշակման աշխատանքները, որի բովանդակությունը վերջնական հստակեցվելու է հունիսի 8-ին կայանալիք ամբիոնի նիստի ժամանակ: Ամբիոնի վարիչը նաև հավելեց, որ այս դասագիրքն ավարտին հասցնելուց հետո ծրագրվում է անցնել միջազգային մարդասիրական իրավունքի դասագրքի մշակման աշխատանքներին:

Քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, դոց. Ս.Մեղրյանը հայտնեց, որ արդեն իսկ մեկնարկել են քաղաքացիական դատավարության դասագրքի մշակման աշխատանքները, և ծրագրվում է հաջորդ ուսումնական տարվա ավարտին ունենալ քաղաքացիական դատավարության նոր դասագիրք և մեթոդական ձեռնարկ:

Քրեական իրավունքի ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա.Գաբուզյանը տեղեկացրեց, որ 2017 թվականի փետրվար-մարտ ամիսներին պատրաստ կլինեն քրեական նոր օրենսգրքի

մեկնաբանությունները, իսկ ամռան ամիսներին՝ քրեական և քրեակատարողական իրավունքի նոր դասագրքերը և փոփոխված խնդրագրքերը:

Պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա.Վաղարշյանը նշեց, որ ամբիոնի 5 դասախոսներ աշխատում են արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմության դասագրքի մշակման ուղղությամբ, իր կողմից կազմում է Հայաստանի պետության և իրավունքի պատմության դասագրքի բովանդակությունը, որից հետո կկատարվի թեմատիկ բաշխում ամբիոնի դասախոսների միջև

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաղորդումն ընդունել ի գիտություն:

**6. ԼՍԵՑԻՆ.ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի առկա ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելության քննություններին մասնակցության երաշխավորություն տալու մասին հարցը:**

Խորհրդի քարտուղար Տ.Սուջյանը հայտնեց, որ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի առկա ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելության քննություններին մասնակցության երաշխավորություն ստանալու խնդրանքով իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդին են դիմել ֆակուլտետի հետևյալ շրջանավարտները՝

1. Լիլիթ Պետրոսյանը.
2. Տիգրան Ղազարյանը.
3. Սիրո Ամիրխանյանը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Տ.Բարսեղյանը, պրոֆ. Ն.Այվազյանը, պրոֆ. Ա.Գաբուզյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով Լիլիթ Պետրոսյանի, Տիգրան Ղազարյանի և Սիրո Ամիրխանյանի՝ ուսումնառության ընթացքում ցուցաբերած գերազանց առաջադիմությունը և առկա ուսուցմամբ ասպիրանտուրայում ուսումը շարունակելու ցանկությունը՝ երաշխավորել նրան մասնակցելու առկա ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելության քննություններին:

**7. ԼՍԵՑԻՆ. 2015-2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսանողական սոցիոլոգիական հարցումների արդյունքների ամփոփում:**

Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանն ամփոփ ձևով ներկայացրեց 2015-2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսանողների սոցիոլոգիական հարցումների արդյունքները: Ամբիոնների վարիչները հավաստիացրին, որ այդ արդյունքները՝ ըստ ամբիոնների, մանրամասն քննարկվել են ամբիոնների նիստերի ժամանակ:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Տ.Բարսեղյանը, պրոֆ. Ն.Այվազյանը, դեկանի տեղակալ, պրոֆ. Հ.Խաչիկյանը, դոց. Ա.Մարգարյանը, դոց. Ա.Սերոբյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաղորդումն ընդունել ի գիտություն:

**8. ԼՄԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի առկա ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:**

**8.1 ԼՄԵՑԻՆ.** Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի երրորդ տարվա ասպիրանտ Պարզև Սարոյանի ատեստավորման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Ն.Այվազյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պարզև Սարոյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 174 կրեդիտ, ներառյալ՝ 20 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 22 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 10 կրեդիտ պրակտիկայից, 122 կրեդիտ՝ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

**8.2 ԼՄԵՑԻՆ.** Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի երկրորդ տարվա ասպիրանտ Տիգրան Նաղդալյանի ատեստավորման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Ն.Այվազյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Տիգրան Նաղդալյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 104 կրեդիտ, ներառյալ՝ 12 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 10 կրեդիտ՝ պրակտիկայից, 82 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

**8.3 ԼՄԵՑԻՆ.** Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առաջին տարվա ասպիրանտ Կարեն Հակոբյանի ատեստավորման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Ն.Այվազյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կարեն Հակոբյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 62 կրեդիտ, ներառյալ՝ 15 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 9 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 4 կրեդիտ պրակտիկայից, 34 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

**8.4 ԼՄԵՑԻՆ.** Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առաջին տարվա հայցորդ Հրաչուհի Սարգսյանի ատեստավորման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Վ.Հովհաննիսյանը, դոց. Ս.Մեղրյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հրաչուհի Սարգսյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 44 կրեդիտ, ներառյալ՝ 20 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 24 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

**8.5 ԼՍԵՑԻՆ.** Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի երկրորդ տարվա ասպիրանտ Տիգրանի Խաչիկյանի ատեստավորման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ Վ.Հովհաննիսյանը, դոց. Ս.Մեղրյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Տիգրան Խաչիկյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել անհրաժեշտ կրեդիտներ հետազոտողի ընդհանուր և մասնագիտական պատրաստվածության կրթամասերից, տպագրել է երկու գիտական հոդված, իսկ երրորդ հոդվածը գտնվում է տպագրման փուլում, անցել է անհրաժեշտ գիտահետազոտական պրակտիկա ՀՀ ֆինանսների նախարարության (ներկայիս ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի) Արարատյան տարածաշրջանային մաքսատանը, աշխատում է ատենախոսության 2-րդ և 3-րդ գլուխների վրա, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

**8.6 ԼՍԵՑԻՆ.** Պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առաջին տարվա ասպիրանտ Հայկ Հարությունյանի ատեստավորման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ Ա.Վաղարշյանը, ասիստենտ Տ.Սիմոնյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայկ Հարությունյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 14 կրեդիտ, ներառյալ՝ 10 կրեդիտ պրակտիկայից, 4 կրեդիտ՝ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

**8.7 ԼՍԵՑԻՆ.** Պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի երկրորդ տարվա ասպիրանտ Տիգրան Ղազարյանի ատեստավորման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ Ա.Վաղարշյանը, ասիստենտ Տ.Սիմոնյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Տիգրան Ղազարյանը հաշվետու ժամանակաշրջանում մասնակցել է 2 գիտաժողովների, որոնցից մեկը՝ արտերկրում, ավարտել է թեկնածուական ատենախոսությունը, հավաքել է անհրաժեշտ կրեդիտներ ընդհանուր և մասնագիտական պատրաստվածության կրթամասերից, պրակտիկայից և հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

**8.8 ԼՍԵՑԻՆ.** Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի երկրորդ տարվա ասպիրանտ Արսեն Հովհաննիսյանի ատեստավորման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Հայկյանցը, դոց. Դ.Սերոբյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արսեն Հովհաննիսյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 152 կրեդիտ, ներառյալ՝ 20 կրեդիտ հետազոտողի

ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 10 կրեդիտ պրակտիկայից, 122 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

**8.9 ԼՍԵՑԻՆ.** Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի երրորդ տարվա ասպիրանտ Ռաֆիկ Գրիգորյանի ատեստավորման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Հայկյանցը, դոց. Դ.Սերոբյանը:  
**ՈՐՈՇԵՑԻՆ.**

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ռաֆիկ Գրիգորյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 175 կրեդիտ, ներառյալ՝ 21 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 22 կրեդիտ հետազոտողի մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 10 կրեդիտ պրակտիկայից, 122 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

**8.10 ԼՍԵՑԻՆ.** Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առաջին տարվա ասպիրանտ Գևորգ Պողոսյանի ատեստավորման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Հայկյանցը, դոց. Դ.Սերոբյանը:  
**ՈՐՈՇԵՑԻՆ.**

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գևորգ Պողոսյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 60 կրեդիտ, ներառյալ՝ 15 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 6 կրեդիտ պրակտիկայից, 39 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

**8.11 ԼՍԵՑԻՆ.** Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի երրորդ տարվա ասպիրանտ Գուրգեն Մեղրյանի ատեստավորման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Հայկյանցը, դոց. Դ.Սերոբյանը:  
**ՈՐՈՇԵՑԻՆ.**

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գուրգեն Մեղրյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 148 կրեդիտ, ներառյալ՝ 15 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 15 կրեդիտ հետազոտողի մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 8 կրեդիտ պրակտիկայից, 118 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

**8.12 ԼՍԵՑԻՆ.** Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առաջին տարվա ասպիրանտ Մովսես Խաչատրյանի ատեստավորման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Հայկյանցը, դոց. Դ.Սերոբյանը:  
**ՈՐՈՇԵՑԻՆ.**

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մովսես Խաչատրյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 60 կրեդիտ, ներառյալ՝ 15 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 9 կրեդիտ հետազոտողի մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 4 կրեդիտ պրակտիկայից, 32 կրեդիտ՝ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

**8.13 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի երկրորդ տարվա ասպիրանտ Էդգար Անդրեասյանի ատեստավորման հարցը:**

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

Քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ, պրոֆ. Վ.Ավետիսյանը հայտնեց, որ ամբիոնը որոշել է չատեստավորել 2-րդ տարվա ասպիրանտ Էդգար Անդրեասյանին: Գիտական ղեկավար, պրոֆ. Ա.Հայկյանցը տեղեկացրեց, որ հաշվետու ժամանակահատվածում ասպիրանտը պատրաստել է ընդամենը մեկ գիտական հոդվածի նախագիծ, որը համապատասխան դիտողություններով և լրացումներով մոտ 6 ամիս առաջ վերադարձվել է, սակայն այդպես էլ համապատասխան ուղղումներով կրկին չի ներկայացվել: Պրոֆ. Ա.Հայկյանցը հավելեց, որ հաշվետու ժամանակահատվածում ասպիրանտի կողմից թեկնածուական ատենախոսության մշակմանն ուղղված որևէ աշխատանք չի իրականացվել, ուստի խիստ անիրական համարեց ընդամենը մեկ տարվա ընթացքում սահմանված պահանջներին համապատասխանող թեկնածուական ատենախոսություն ներկայացնելու հնարավորությունը:

Խորհրդի միաձայն որոշմամբ իր դիրքորոշումը ներկայացնելու հնարավորություն տրվեց ասպիրանտ Էդգար Անդրեասյանին: Վերջինս խնդրեց խորհրդին իրեն տրամադրել երեք ամիս ժամանակ՝ հավաստիացնելով, որ այդ ժամանակահատվածում կներկայացնի թեկնածուական ատենախոսության նախագիծը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Ա.Գաբուզյանը, պրոֆ. Վ.Ստեփանյանը, դոց. Ս.Մեղրյանը, դոց. Ա.Ղազինյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Անցկացնել բաց քվեարկություն, որի արդյունքում 29 կողմ, 0 դեմ և 5 ձեռնպահ ձայներով հաստատվեց Քաղաքացիական իրավունքի ամբիոնի որոշումը երկրորդ տարվա Էդգար Անդրեասյանին չատեստավորելու մասին:

**9. Ընթացիկ հարցեր**

**9.1 ԼՍԵՑԻՆ.** Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի դոցենտ Էդգար Շաթիրյանին ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք-սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտության թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու համար թույլտվություն ստանալու համար ՀՀ ԲՈՀ-ին միջնորդելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Գ.Դանիելյանը, դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Հաստատել Սահմանադրական իրավունքի ամբիոնի որոշումը՝ ամբիոնի դոցենտ Էդգար Շաթիրյանին ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք-սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտության թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու համար թույլտվություն ստանալու համար ՀՀ ԲՈՀ-ին միջնորդելու մասին որոշումը:

**Բ.** Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

**9.2 ԼՍԵՑԻՆ.** Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի



դոցենտ Սամվել Մուրադյանին ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք-սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտության թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու համար թույլտվություն ստանալու համար ՀՀ ԲՈՀ-ին միջնորդելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Գ.Դանիելյանը, դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Հաստատել Սահմանադրական իրավունքի ամբիոնի որոշումը՝ ամբիոնի դոցենտ Սամվել Մուրադյանին ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք-սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտության թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու համար թույլտվություն ստանալու համար ՀՀ ԲՈՀ-ին միջնորդելու մասին որոշումը:

**Բ.** Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

**9.3 ԼՍԵՑԻՆ.** Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի դոցենտ Վարդան Այվազյանին ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք-սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտության թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու համար թույլտվություն ստանալու համար ՀՀ ԲՈՀ-ին միջնորդելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Գ.Դանիելյանը, դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Հաստատել Սահմանադրական իրավունքի ամբիոնի որոշումը՝ ամբիոնի դոցենտ Վարդան Այվազյանին ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք-սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտության թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու համար թույլտվություն ստանալու համար ՀՀ ԲՈՀ-ին միջնորդելու մասին որոշումը:

**Բ.** Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

**9.4 ԼՍԵՑԻՆ.** Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Ռուբինա Պետրոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Վ.Ավետիսյանը, դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Հաստատել Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Ռուբինա Պետրոսյանի՝ «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների անձնական ոչ գույքային և գույքային իրավունքների իրականացումը ՀՀ-ում» վերառույթամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.03- «Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)».

**Բ.** Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Վ.Ավետիսյանին.

Գ.Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

**9.5 ԼՍԵՑԻՆ.** Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Արամ Ղահրամանյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Վ.Ավետիսյանը, դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Հաստատել Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Արամ Ղահրամանյանի՝ «Պետական և մունիցիպալ գնումների գործընթացի քաղաքացիաիրավական կարգավորումը» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.03- «Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)».

**Բ.** Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Ա.Հայկյանցին.

Գ.Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

**9.6 ԼՍԵՑԻՆ.** Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ասպիրանտ Գուրգեն Մեղրյանի թեկնածուական ատենախոսության վերտառության փոփոխման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Վ.Ավետիսյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Փոփոխել Քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ Գուրգեն Մեղրյանի թեկնածուական ատենախոսության վերտառությունը և հաստատել այն՝ «Տնտեսական ընկերությունների կողմից խոշոր և շահագրգռվածությամբ գործարնքների կնքման առանձնահատկությունները» վերտառությամբ, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.03- «Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)».

**Բ.** Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

**9.7 ԼՍԵՑԻՆ.** Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ասպիրանտ Վահե Աբելյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ս.Մեղրյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Հաստատել Քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ Վահե Աբելյանի՝ «Աշխատանքային իրավունքի ճյուղային սկզբունքների իրացումը ՀՀ աշխատանքային օրենսգրքում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.03- «Մասնավոր

իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)».

**Բ.** Գիտական ղեկավար հաստատել ի.գ.թ., դոց. Գ.Պետրոսյանին.

**Գ.** Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

**9.8 ԼՍԵՑԻՆ.** Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հայցորդ Էմմա Ավագյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ.Ս.Դիլբանդյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

Ա.Հաստատել Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հայցորդ Էմմա Ավագյանի՝ «Խոշտանգման քննության և բացահայտման առանձնահատկությունները» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.04 - «Դատական իրավունք».

**Բ.** Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., դոցենտ Վ.Ենգիբարյանին.

**Գ.** Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

**9.9 ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը Ալվարդ Ալեքսանյանի՝ «Հայ լուսավորիչների ազգային-ազատագրական և իրավաքաղաքական միտքը XVIII երկրորդ կեսին» վերտառությամբ դասախոսությունների տեքստը հաստատելու և տպագրության երաշխավորելու մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Սարգսյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ Ալվարդ Ալեքսանյանի՝ «Հայ լուսավորիչների ազգային-ազատագրական և իրավաքաղաքական միտքը XVIII երկրորդ կեսին» վերտառությամբ դասախոսությունների տեքստը հաստատել և երաշխավորել տպագրության:

*Խորհրդի նախագահ*

*Գ. Ղազինյան*

*Խորհրդի քարտուղար*

*Տ.Սուջյան*